



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՄՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՆԱԿԱՆ

ԶՄԻՌՆԻՄՅ ԵՒ ՄԱՐԿԱՆ 7 ՕԳՈՍՏՈՍ 1876

ԹԻԻ 1046

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ինչպէս յայտնի է մեր բնութեանը, կայսերական զօրաբանական երթումը կը յառաջանայ Սերվիլի մէջ և կը տարբերուի զայնուհետեւ քաղաքացիական պատերազմէն: Իսկ Սերվիլիի զօրքն՝ որոյ վաղուց անգամ ինքն ինքի անկախութիւնը որ ըստ օրէ կը յաւելնան 'ի պատճառս զանազան պարտութեանց, չհամարձակելով դէմ դնել կայսերական զօրաց յաղթական յարձակմանը, դէպ 'ի Պէլկրատ ետ կը քաշուին և պաշտպանողական դիրք մի բռնած են այժմ: Սերվիլի ժողովուրդը՝ վճատեալ 'ի վերջին յաղթութեանց կայսերական զօրաբանական, ահադողի մէջ կը գտնուին և մեծ բազմութեամբ Աստրիի և Բուխարիոյ երկիրները կապաստանին: Պուրէշէն (որ Բուխարիոյ մայրաքաղաքն է) կը գրեն, թէ յիշեալ իշխանութեան երեսփոխանական ժողովը քուէարկութեամբ որոշեր է, որպէսզի ժողովուրդը եղած ծախքն լինի յօդուածին 20 հազարի չափ անձանց, որք Սերվիլիէն վախճելով տապաւնեալ են 'ի Բուխարիա:

Իրաց այս վիճակին մէջ մեծ տէրութիւնքն որք համաձայն են մէջերին, կը պատրաստուին դիմանալ իստութեամբ (տիրութեամբ) միջամտի լինել այս ձախորդ պատերազմին և խաղաղութեամբ վախճան տալ Արևելեան խնդրոյն՝ եւրոպական ժողովոյ մի միջոցաւ: Եթէ հաւատ ընծայելու լինիմք անգղեկութեանցն՝ բոլորեց 'ի հաւատարմութեան անգղեկութեան, յիշեալ դիմանալողական միջամտութեան նպատակն է համազօր Սերվիլիի որ զինադադարում մի խնդրէ և յայնժամ մեծ տէրութիւնքն յանձնառու պիտի լինին 'ի ձեռս բերել զհաճութիւնն Բիրան՝ աշխատելով պատուաւոր կերպիւ հաշտութիւն ընել: որ մի միայն միջոցն է, (կընէ գաղղիարէն լրաց իրեն կը քաշուին այս տեղեկութիւններն) առաջին առնել կատարեալ կործանմանը Սերվիլի ու Գաւառագի իշխանութեանց, որք յոյժ անխոհմտաբար ձեռք զարկին անհաւատարմ պատերազմի մէջ որոյ վախճանն

միշտ տղետալի պիտի լինի վասն յիշեալ վտարիկ իշխանութեանց:

Միայն իշխանին հաւանական անկման՝ այսինքն դաժնադուր լինելուն ձայնն՝ կըսէ Փարիզի ԼԸ ԴԱՆ օրագիրն, երթալով կը բարձրանայ և կը տարածի: և այս ձայնն ևս առաւել կը հաստատուի, քանզի Նաթալի իշխանուհին՝ այսինքն Սերվիլի իշխանին յծակիցն, որոյ ծննդաբերութեան առաւել մօտ են, ծնանելու համար 'ի Պէսարապիա (Ռուսաստան) պիտի երթայ, կըսեն, վասն անհաշուութեան: Նաթալի իշխանուհին անշուշտ իրաւունք ունի չվատահաւալու Պէլկրատի մէջ մնալ: քանզի այս մայրաքաղաքէն հասեալ թղթաւորութիւն մի հետեւեալ տեղեկութիւնները կուտայ:

Օսմանեան զօրքն՝ որոյ թիւը գրեթէ 90 հազարի կը հասնի, ամենայն յաջողութեամբ մտին 'ի Սերվիլի, և իրենց դէմք միայն 60 հազարի չափ սերվիլի զօրք կը գտնուին: Ապտիւլ Բէրմիւլիան՝ Սերվիլիի իշխանին նեղ և անձուկ ճանապարհը առանց նեղութեան անցաւ՝ որ անանցանելի կը նկատուէր, և Սերվիլիից համազօր եղին թէ օսմանեան զօրաբանական պիտի չկրնար մտնել 'ի Սերվիլի, բայց միայն արեւմտեան կողմանէ: Բայց արդէն 60 հազար օսմանեան զօրք Գնիադէվաջի առջև կը գտնուին և Օսման փաշան ամեն հարկաւոր միջոցներն 'ի գործ դրած է 40 հազար հող 'ի Զայիյարի մօտ կը գործնանելու: Եթէ այս երկու զօրաբանական յաջողին միաւորուելու, յայտնի է թէ Պէլկրատի ճանապարհը բաց պիտի համարուի կայսերական զօրաց համար:

Պէլկրատի «Պաշտօնական լրագիրն»՝ Միլան իշխանին մէջ հրամանագիրն կը հրատարակէ, որով Զէրնայիէն զօրապետն՝ ընդհանուր հրամանատար կը կարգուի Գիւմըքի և Մորավայի միացեալ զօրաբանական: Այս տնօրէնութենէ ետեւ, զինուորական շարժմանց նոր յատակագիծ մի ընդունուեցաւ: որոյ համեմատ Զայիյար բերդապահ քաղաքը պարպուեցաւ, առանց սպասելու յարձակման օսմանեան զօրաց:

Օգոստոսի միջին շաբաթը ըստ առաջարկութեան բարձրա՝ Մեծ-Եսպարդան, հաճեցաւ մարդասիրաբար կատարեալ անյիշարութիւն և ներողութիւն շնորհել Պուլկարստանի ապստամբաց, 'ի բաց առեալ զգլխաւոր առաջնորդքն այս ապստամբութեան, որք զրկեալ պիտի մնան յիշեալ շնորհէն:

Վերջին հեռագիրներն՝ կը ճանաչանան թէ Միլան իշխանն՝ զօրաբանական թողով 'ի Պէլկրատ վերադարձաւ, որպէսզի իւր ներկայութեամբ քաջալերէ զժողովուրդն՝ որ ահադողի մէջ կը գտնուի: Կը հաւատեն թէ Սերվիլի բազմութիւնը զիւրօրաբար կը մնա գրեթէ օսմանեան իրաւասութեան ներքև մանել վասն անհաշուութեան:

Եթէ ինչ Բրիտանիոյ առաջին նախարար միտար Տիգրայէլին քաղաքային գործունեաց ընթացքն 'ի մասին Արևելեան խնդրոյն՝ արժանապէս կը վարձատրուի: քանզի Լոնտոնէն ամսոյ ջ—14էն արձակեալ հեռագրէ մի կիմանամք թէ Նորին վոեմութիւնն՝ կոմսի տիտղոսով պատուեցաւ 'ի վեհա՝ Թագուհոյն և միանգամայն լրաբերուն խորհրդաբանին անդամ անուանեցաւ:

Թանցելում շաբաթուր բարձրագոյն Դուռն յուզարկեաց առ վեհ. գեղարան Գերմանիոյ և Գաղղիոյ որ 'ի Կ. Պոլիս՝ 900.000 ֆր. 'ի փոխարէն փաստուց այրի լծակցաց հիւպատոսացն, որք սպանուեցան Սէլանիկի մէջ: Այս գումարէն 600.000 ֆրանքն պիտի տրուին հանգուցեալ մօսիւ Մուլէն՝ Գաղղիոյ հիւպատոսին տիկնոջ, որ երեք դաւակ ունի: և մնացեալ 300.000 ֆր. պիտի յանձնուին հանգուցեալ մօսիւ Ապթի Գերմանիոյ հիւպատոսին տիկնոջ: Կը հաւատեն թէ Գերմանիոյ և Գաղղիոյ դեսպանքն՝ զինի ընդունելոյ զիշեալ դրամական փոխարկութիւնն պահանջեցին միանգամայն, որպէսզի Սէլանիկի նախորդ կուսակալին, ինչպէս նաև Պուլկար աղիկան առաջին յաջողական Սէլ—Պէլկրատ (որ նոյն քաղաքին գլխաւորներէն մին է) միամեայ բանտարկութեան պատիժն 'ի գործ դրուի Սէլանիկի մէջ, ուր տեղի ունեցաւ յիշեալ հիւպատոսաց սպանումն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՅԵՐԵՎԱՆԻ
Ի գերա. Ալի Արքեպիսկոպոսէ:
(Շարունակութիւն: Տես նախընթաց բիւլը)

Որ ինչ անցք են պատմութեան աղի մեր աստ յեղիպոս, ոչ ի վեր յառաջանան քան զթուական ֆրիլին 1824, այն է՝ յաւուր առաջնորդութեան կիրակոս եպիսկոպոսի, որ եղև յետոյ Պատրիարք Երուսաղէմի:

Յեկեղեցական յիշատակարանացն չիք մեղ քաղել ճիշդ: Ժամանակագրական տեղեկութիւնս վասն ժամանակին բնութիւնն անցնելով դուրս դուրս անհաշու մի յառաջնորդաց մինչ ց. յիշատակեալ. Եպիսկոպոս, բայց ի սակաւուց ինչ պիտի ընդ մերում ձեռնարկութեան, զորս և ի յիշատակարանացն ըստ կարգի առնեմք ցանկալի: Բայց և ոչ ի նոսին գտանեմք զարուսնալ յաջորդութիւն Առաջնորդացն ի սուրբ Սարգիս եկեղեցւոյ, կամ նախ քան զայն ի քաղաքիս: ուստի և զայն ամենայն յակամայից թողով յանձնեմք, զի մեմք ի գործս ժամանակակից Առաջնորդաց և առ մեծքն եղևոց աղիս Հայոց:

Յիշատակեալ Եկեղեցւոյ կարգի Առաջնորդ

Հայոց Եկեղեցւոյ յամին՝ որպէս ասացաւ 1824՝ բնդ իւր բերելով զԳաբրիէլ վարդապետ փոխանորդ ինքեան: Սա վարդապետը առաջնորդութիւնն զամս մետառան մինչև ցամ. Տեառն 1835. իսկ յորժամ ել նա յայսմ պաշտօնէ, բնաբեցաւ փոխանակ Եպիսկոպոսին յաջորդ նորա Գաբրիէլ վարդապետ ի նոյն ամի:

Յաւուրս Առաջնորդութեան կիրակոսի եղևոց են Հայք տեղւոյս ի մեծ յաջողութեան յարգունի գործս բոլորին, յորում և իշխանութիւն հասեալք, որպէս է Պօղոս—Պէլ Երուսաղէմէն, որոյ գործք աշխարհամասօթ են յերոպոս:

Ի մեծամեծ գործս բոլորին երկրիս՝ էր սա հաւատարիմ Դրան արքունի: յորոց ի շնորհս և Հայք վայելեալք են զապահովութիւն և զաղատութիւն կենաց և կայից, և բազումք ևս ի վաճառականութիւն շահալուծաւ լեալ:

Իսկ ի կարգի վաճառականաց երևելի եղևն ի յետին ժամանակս Եղիազարեան Ալէքսան աղա և Միքայէլ աղա իսպառարան, որք յառաջագէմ դասն վասն օգտի տղգիս ի պաշտօնի լուսնայիս ինքն ինչ եկեղեցական տունք: Ի կարգի յաւատարմութեան եղևաւտարի, պատու բարեպաշտութեան սոցա ի փառս հայրենի եկեղեցւոյ ի պանդուխտ երկրիս՝ ի վարձ փոխարինի բարեաց հատուցման:

Ի սկզբան առաջնորդութեան Գաբրիէլ վարդապետի, որ կալաւ զառաջնորդութիւն որպէս ասացաք՝ զինի կիրակոս եպիսկոպոսի յամին 1835, աղգ մեր յեղիպոս և առաւել աստ ի Գահլիք՝ աղգ պին սեպհականութեամբ հանգիստացաւ ի մէջ աղգաց Տաճկաց, Արարացւոց և Ղլտեաց տեղւոյս, և ծանուցաւ յայս եւրոպացւոց և միւս քրիստոնէից՝ աղգ հին և քրիստոնէական կրօնի: քաղաքացաւ հաւասար քրիստոնեաց ազանց, որպէս էին ի սկզբանէ քրիստոնէութեան իւրեանց յնդհանուր պետութեան օսմանցւոց առ ահի ճնշեալ ի քրիստոնէութեան վիճակի ի բռնութենէ մահմետական կրօնից:

Փանդի որպէս դրեալ եմք ի ստորագրութիւնս եկեղեցեացն, ցայն վայր աղգ մեր ոչ ունէր զեկեղեցի առանձին, այլ զի աղգ Ղլտեաց սեպհական աղգ է Եկեղեցւոյս և սեպհական բնակիչք երկրին, նոքա միայն ունէին զեկեղեցի ըստ ձեւոյ տան տեղի աղօթից Աստուածապաշտութեան, յորժամ Արարացիք զօրացեալք առին յեղիպոսացւոց զուղչն Արիիկէ:

Այլ զի և յԱրարացւոց առին Տաճիկք, յայն սուկ և չէր օրէն յեղիպոս ի նոյն պետութեան միւս քրիստոնէից ունել զեկեղեցի որպէս և Հայոց: զի որք էին ի Ղլտեաց կամ ի Յունաց ի վաղ ժամանակաց՝ էին յաւուր անտի Եկեղեցական պետութեան:

Ուստի նորոգ Առաջնորդն յիշատակեալ Գաբ

ԱԶԳԱՅԻՆ

Մեր նախնիքները թող ծանուցինք թէ Կ. Պոլսոյ ազգային լրագրներէն Կովկասեան գաւառաց մէջ կարծեցեալ քաղաքական խռովութեանց անհիմն լուրեր հրատարակող Յ. Թերթը խափանեցան բարձրագոյն հասմանաւ : Այս թերթերէն մին՝ ԼԻԱՅԻՐԵՆ Է, երկրորդն՝ ՆՈՒԱ-ԳԻՐԵՆ և երրորդն՝ ՄԷՃՄՈՒԱՅԻ ԶԱՄԱՏԻՍԵՆ : Բայց յայտցանէ ԶԱՅԻՆԻՔ լրագիրն և ԼՈՅՍ հանդէսն յիշեալ անհիմն և սուտ լուրերն հրատարակած և Կ. Պոլսոյ Հայ հասարակութեան անտեղի յուզմանն պատճառ եղած լինելով, մշտնջենաւոր կերպիւ գաղաղակցան : Իսկ ՄԱ-ՄՈՒԼ կոչուած ծաղրաթերթն՝ ամսուան մի համար գաղաղակցաւ :

ԹԱՏՐԱՆ, անուն ծաղրաթերթին և ՄԱՆՁՈՒ-ՄԷԼԻ ԷՖԵՍՈՒՐ լրագրին ազգարարութիւնք եղեն ՚ի Տպագրական տեսչութեան, որպէսզի զգուշանան, առաջինն՝ անձնականի վերաբերեալ անպատեհ հրատարակութիւններէ, և երկրորդն՝ հասարակութեան զայրոյթ պատճառող գառն խօսքեր հրատարակելէ, եթէ չեն ուզեր որ բոլորովին խափանուին :

Երաժիշտական լրագրաց ոմանց խմբագիրներն՝ կըսէ (ԲԱՄԻՆ), Բարձրագոյն Գրան հրամանաւ քննութեան ենթարկուեցան ոտիկանութեան Գառն՝ Կովկասեան յեղափոխութեան վերայ հրատարակած լուրերուն աղբիւրը ցոյց տալով :

Ստոյգ է թէ Կ. Պոլսոյ ազգային լրագրաց գլուխն հասած այս փորձանքն ծանր է : որոյ վերայ կըցաւ իմք ՚ի սրտէ, բայց միանգամայն ոչ նուազ ստոյգ է թէ ինքեանք հրաւիրեցին ՚ի վերայ իւրեանց զայս պատիժն՝ անխոհմտութեամբ և աղատ հրատարակութեան վերայ ունեցած իրենց սխալ գաղափարովն :

Կըհաւատան թէ Բարձրագոյն Գրանն որոշած է որ և է նոր լրագրի հրատարակութեան հրամանագիր չտալ յետ այսորիկ մինչև ցղադարունն այժմեան պատերազմին :

Քաղաքիս ԼԱՐԷՆՈՒՄ անուն գաղղիարէն լրագրէն հաճութեամբ սրտի կըքաղեմք զհետեւեալ նամակն, զոր մեր ուսումնական ազգայիններէն մեծա. Պ. Մ. Արիւարեան պարօնը հրատարակել տուած է :

Զմիւռնա, 11 Օգոստոս 1876 Ն. Թ.

Յարգոյ խմբագիր ԼԱՐԷՆՈՒՄ լրագրոյն,

Իբրև հայր բնականաց և իբրև բարեկամ յառաջագիմութեան, պարտ անձինս կըհամարիմ

Ինչ վարդապետ զայս ներդրութիւն ազգին և զանվայելութիւն սուրբ Սարգիս եկեղեցւոյն, զհնութիւն նորա և զանձկութիւն, ևս և զմի ազգածն լինել նորա ի խորտուած ինչնայրիկ տանն՝ յորում և Ղ. Բաբայան ազգութեան ընդ նեղ և ընդ խոտոր ճանապարհ, յորում և ժողովուրդն ոչ բաւէր մեկնել, բարեգէտ միջոց վարկաւ և զամենայն ջանք մէջ առեալ քաջներեալ ինքնին՝ քաջաբեւե և զիշխանս ևս ընդ իւր ըստ ներկայ ազգաութեան քրիստոնէութեան գաւառներ և զեկեղեցւոյ ազգին աղտոտութիւն, առնուել հրաման շինութեան նորոյ և առանձին ազգային եկեղեցւոյ, որ տաճկական օրինօք փոխեալ էր ընդ ամենայն սխալարհն հակառակ կրօնից համարեալ զայն :

Այսու բարենպաստի խորհրդով զամենայն եկամուտս կալուածոց նրաւորեմք արգելու առ իւր, զորս ինքն ամի ամի առաքէր յԱթոռն և զամենայն նուէր և տուրս բարեպաշտութեան ժողովրդոց կալեալ ի ձեռին, զնէ նոքօք տուան ինչ Հրէից և Ղ. Բաբայան յառաջող առաջնորդարանին նորոյ ի հարաւոյ սուրբ Մարգրիտ եկեղեցւոյն յընդարձակ տեղում, ուր և այժմ եկեղեցին, և քակէ զայն ի առաւ յարգարել տեղի հիմնարկութեան ճաճարին :

Յետ որոյ ապա խնդիր արկանէ առ կուսակալ Բեք-Նին՝ ապա հրամանն ի կառուցանել զեկեղեցի. բայց ըստ որում չէ օրէն և ցարդ ի ճաճկատան կառուցանել քրիստոնէից նորոգ.

հրատարակաւ մատուցանել զնորհակալիս իմ պատուարժան տնօրէնին անդրական գործոցն Զմիւռնոյ՝ վաճառականութեան յատկացելոյ : Քանզի նմա կրպարտաւորիմ զգաւարարութիւնն որդւոյն իմայ, որ յընթացս մի քանի ամաց ՚ի ձեռս բերաւ բաւական հմտութիւնս առ ՚ի կարող լինել օգտակար կերպիւ մտանել յատպարէզ վաճառականութեան ՚ի գլխաւոր քաղաքի միում, որպիսի է Զմիւռնիս :

Վաճառականութիւնն, որպէս ամեն գիտութիւնքն, ունի զտեսական կողմն իւր՝ զորմէ անփոյթ լինելն ներքի չէ երբ զիւրովեմ և մի կրնամք ՚ի ձեռս բերել զօգնութիւն ուսումնական հաստատութեան բարենախանձ և յաջողակ տնօրէնի մը, որպիսի է միտոր Պարքայր :

Ողջունել յարգանաց միամ և այլն

Պ. Մ. ԱՐԻՍՏԱՆ

ԱՐԵՎԱԼՈՒՍՈՑ նախնիքաց թուով հրատարակեցիք զանգիւղութիւնն կալիւթայի թղթակցին մերոյ ՚ի վերայ ճանապարհորդութեան գերազատիւ Գրիգորիս սրբազանին ՚ի Մանթլէ : Ս. Էջմիածնի ԱՐԱՐԱՍ ամապարհն Յունիսի տեսարակին մէջ միւսնայն ճանապարհորդութեան վրայօք հետեւեալ ընդարձակագոյն տեղեկութիւններն կընթեմք, որոյ մէջ փոքր ինչ տարբերութիւնք կըտեսնուին մեր թղթակցին գրածներէն : մանաւանդ որ ԱՐԱՐԱՍԻՑ թղթակցին որ ՚ի կալիւթայ, իւր գրածին ոմայն լով կըերին թէ ուղեկից եղեալ է Գրիգորիս սրբազանին ՚ի Մանթլէ :

Ահա տակի ԱՐԱՐԱՍԻՑ թղթակցութիւնն :

Յետոյ քան զգնալ մեր ի Ռանդուն և ի Մանթլէ՝ գրեալ գրութիւնք մեր հասեալ են առ Զեղ, որք էին 19—21 Յունվարի և ի 16—28 նորին : ի 25—6 Փետրվար մեկնեալ ի կալիւթայէ յողքենաւով՝ 130—11 Փետրվար ողջամբ հասաք ի Ռանդուն : 90 մըն է ի կալիւթայէ, բերան դետոյ ցմոյն : 656 մըն է ծովն և 40 մըն գետն Ռանդունայ : բովանդակ ճանապարհն ի կալիւթայէ ցմանդուն 786 մըն է :

Գոյ ի Ռանդուն սուրբ Յովնանէս Մկրտիչ տնուն եկեղեցի Հայոց, մի քահանայ և 15իւ չափ տունք Հայոց : Գեղեցիկ քաղաք է Պրմաց և այժմ ի ձեռս Անգլիոյ :

Ի 15—27 Փետրվար ի բուն Բարեկենդանի մտաք ի յողքենաւ վասն Մանթլէի : սոյն ճանապարհս դետով է ամբողջ, և 665 մըն է ասն : Երկուս կողմուն գետոյն չեն է՝ գիւղ ի վերայ գեղջ, գոն և քաղաքք, զուարճալի տեսարան բայց միանգամայն ձանձրալի զի յընթացս 14 ասուրց գնացաք : բազում պոռոյտ տունք և 6 ժամ միայն յաւուրն գնայ, ի գիշերին խաւիսն արձակեալ մնայ, զի մէք և մառախուղ ունի, և նեղին տեղիս գտանին :

Եկեղեցի, պատճառ այսպիսի ի մէջ բերէ՝ իբր թէ յառաջագոյն ի տեղումն յայնմիկ եղեալ է եկեղեցի Հայոց և սինովկայ Հրէից, զորս արգկամին միացուցանել : սակայ որոյ և յառաջագոյն ի դատաւորէն (զայմաղամ) առեալ էին ժողովուրդք մեր գիր հաստատութեան :

Ելանէ ի բեկչեան հրովարտակ շինութեան եկեղեցւոյն : իսկ իբրև շինութիւնն բարձրանայ ի կէս կատարման, մեկուսացեալ գոյով բոց ելին անտէ՝ ժամանակին իսլամայքն կոչեցեալ Յաճիկք օրինապօք ժաճմտական կրօնից՝ բողոք բառնան միահաղոյն առ դատաստանապետ քաղաքին արգելաւ զշինութիւն եկեղեցւոյն մերոյ, որոյ շինութիւնն որպէս աստցաք՝ արգելեալ է մահմետական օրինօք ըստ սովորութեան երկրին, մանաւանդ զի միւս քրիստոնէայք ևս չունեն ցայն փայր եկեղեցի յիշխողոս :

Զայս և որ զբացակայութիւն բեկչին առ իմ ի ձեռնն առեալ փոխանորդ նորա, հրաման առաքէ առ Գարբիէլ վարդապետ գաղարեցուցանել զշինութիւն եկեղեցւոյն, միայն եթէ ունին կոթողութիւն, ասէ, նորոգեցոյն զինն զի չիք հրաման շինութեան նորոյ եկեղեցւոյ :

Իբրև գործ առնէ բեկչին, վերստին մաւտուցանեն Հայք ինքիր վասն կատարման շինութեան եկեղեցւոյն արգելեալն ցայն վայրք և վերստին առեալ հրաման շինութեան, հասուցանեն զեկեղեցին ի կատար :

Բայց զի չուսափոյթ եղև շինութիւնն առ եր-

ի 28—11 Մարտի խաւիսեաց ի նաւահանգստին Մանթլէի, և վասն երեկոյացեալ ժամանակն Զմիւռնոյ ի գիշերին ի նաւի : ի հետեւեալ առաւօտուն՝ որ էր Ահառակի կիւրակէ, չորս փիղ առաքեալ էր թագաւորն հանդերձ պաշտօնաւ տարաւ միով ընդ առաջ գերա Գրիգորիս արքեպիսկոպոսի, ընդ նմին և քահանայն մեր և ժողովուրդն հանին ի նաւէ, և նստեալ ի փիղ մի ժամաւ հասաք յեկեղեցին մեր, ուր իջեանա կալաւ գերա. Առաջնորդն մեր. զայս շինեալ է (այսինքն զընակարան քահանային) թագաւորն 2500 ուրբով, իսկ եկեղեցին ժողովրդական տրօք յամին 1862 յանուն ուրբ Լուսաւորչի :

Ի 1—13 Մարտի ըստ հրամանի թագաւորին Գրիգորիս սրբազանն գնաց ի տես չորից վէղի բաց. զայս մեծպատիւ համարին և միայն գետնայ առնէ թագաւորն : թէ և խեղճ բան է :

Յ 3—15 Մարտի գնացեալ ներկայացաւ թագաւորին ի պալատն : տեղին ընդունելութեան էր սիւնաղարդ սրահ մի ոսկեզօծեալ փայտայէն ծանրալից գորգս փռեալ էին վասն Գրիգորիս արքեպիսկոպոսի, ուր նստաւ ժողովարար և երեմն ի վերայ ծնկան զիարդ և կամեցաւ նստան և երկու քահանայք Հայոց (մինն ի Ռանդունայ բերեալ և միւսն աշխարհական թագաւորն) և 14իւ չափ մեծազնայ ժողովուրդք : Յետ 5 րոպէի եկն թագաւորն և ողջունեաց, Գերա. Առաջնորդն և որք ընդ նմա էրն նստեալ մնացին : զի այն է սովորութիւն տեղոյն՝ զորս կատարու բանակցեալ որոշեցին : վասնորոյ կարի պատուով և կարեմ տուել քան զգետապետ հիւրնիսկիցաւ : սուտ է այն որ ասն գալ ի վերայ ծնկան : զայդպիսի սովորութիւն չառաջարկեցին Գրիգորիս արքեպիսկոպոսին : կարի մարդատիրութեամբ և հալոյ թագաւորն զգաւատենէ և զնորին վեհափառութեան Հայրապետի առմենայն Հայոց : Եհալոյ զվերադարձ Գրիգորիս արքեպիսկոպոսին : որ և յայտնեաց թէ վեց օր միայն մնալ ունի : յայտնեաց զմեծ համարումն իւր զվեհափառէն և բովանդակութիւն մտայն էր միջնորդութեամբ վեհին շահել զարեկա մութիւն : . . . : Յաղամ մտին կարի զգուշութեամբ խօսեցաւ (սրբազանն) միանգամայն ի վերայ բերելով որ եթէ ինքն ծաղկիցուայ զՀայոս անգ. և շնորհս ունիցի ի վերայ քահանայի զոր նոր առաքեալ էր գերա. Առաջնորդն, ինքն ևս ջանայ ըստ կարի : արդարեւ խեղճ բան է գրութիւն տեղական Հայոց՝ որք են 53 հոգիք և 13 տունք, ըստ մեծի մասին Զուգայեցիք : սորա ամենեքեան բաց յերկուց տանց՝ ակնկալեն ի թագաւորէն, որպէս և պարտն Մինաս միանգամ և եթ յաջողեալ է առնուլ մի գիր ի

կիւղի, իբրև կատարեալ որք եալն էր եկեղեցին անկաւ տանիք նորա և քակեցան որմունքն ի տեղիս տեղիս : ըստ որոյ և սակաւ ինչ ցած քան զառաջինն կանգնեցին վերապին առաւելութք պարտուց : ընդ որով տակաւին ճաշէր այս նորակաւոյց եկեղեցի և յաւուրս մեր յամին 1853 մինչ էաք ի Գահիրէ :

Յամենայն յայտնիկ ձեռնարկութեան թէ ի բանս արքանի և թէ ի շինութեան եկեղեցւոյն գործակից և միանգամայն վերակացուք էրն արդոյ Ալէքսան Եղիազարեան և Միքայէլ Խաչատրեան յառաջաւոր իշխանք ժողովրդեանն : որոյ և մեծարդոյ գոյով յաչ Բեկչին ըստ հատարմութեանց իւրեանց առ գործադարս և առ գաւառորս իշխանութեանն, ունէին համարումն մեծ : որով և յաւարտ հասուցին զի նախ ինչ եկեղեցւոյն, և պատճառ եղին այլոց ևս քրիստոնէից ունել առանձին եկեղեցի ի Գահիրէ : ուր ոչ գոյր և ոչ մի բաց յեղեցին յառաջին ժամանակաց, որպէս ասացաք :

Քանզի յորժամ երկրորդ ազերս մատուցաւ յազգէ մերմէ առ Բեկչին սակաւ արգելոյ յաւանանցն զինութիւն եկեղեցւոյն մերոյ, հրովարտակ հհան նա ինքն Բեկչին բողոք ամենայն եղիպատ, զի ոչ միայն Հայք աղատ եղեցին կառուցանել զեկեղեցին, այլև ամենայն քրիստոնէայք ուր ուրք զամենայն ի ներքոյ իշխանութեան իւրոյ :

Եւ ահա ըստ հրամանի ըստ այսմիկ այժմեան

Քաղաքիս Հայ Ընթերցատան Տնօրէն—Խորհրդի կողմէն իր անուանեալ արդոյ հասարակութեան որ այս ազգօգուտ հիմնարկութիւնը բաց պիտի ըլլայ ընթերցասէր տիկնայց համար շաբաթը երկու անգամ, այսինքն երեքշաբթի և շաբաթ կէսօրէն ետքը :

Տնօրէն—Խորհուրդ
ՀԱՅ ԸՆԹԵՐԾԱՏԱՆ

ՔԱՆԱՅԱՆ ԼՈՒՔՔ

Զմիռնիս, 7 Օգոստոս :

Կայսերական հրովարտական վսե. Սապրի փաշան, որ ոստիկանութեան նախարար էր 'ի Կ. Պոլիս, Սյոթնի վիլայէթին կուսակալ անուանեցաւ : Նորին վսեմութիւնն որոյ կենցաղագէտ տաղանդն և բարեխնամ վեհ զգացմունքն յայտնի են մեր քաղաքացւոյց, թէ և կը պատուէր այսօր 'ի Կ. Պոլսոյ բայց չհասաւ :

—Անգղիոյ Թագուհւոյն երկրորդ որդին բարձրա. էտիմպուրիկի դուքսն՝ Սա. Լան անուանեալ զրահաւոր ֆուէկաթով՝ որուն հրամատարն է, անցեալ ամսոյ 27ին Պէշիքայէն գալով հասաւ 'ի նաւահանգիստ մեր, ուր գրեթէ շաբաթ մի մնալով վերադարձաւ 'ի Պէշիքա, որ Տարտանէի բերանն է :

Նորին Բարձրութիւնն նախ քան զմեկնիլն, փոխադարձ այցելութեան գնաց վսե. Խուրշիտ փաշային 'ի պալատն տեղական իշխանութեան, ուր արտաքոյ կարգի փառաւոր մեծարանօք ընդունուեցաւ : Քանզի բազմաթիւ սոփիստներ և ուրիշ հայրենասէր պատուաւոր մահմէտականք յապացոյց իրենց ազգային համակրական սիրոյն և յարգանաց վասն Անգղիոյ Թագուհւոյն և անգղիացի ժողովրդեան՝ անուշահոտ ծաղիկներ կըսփռէին 'ի վերայ ճանապարհին՝ յորմէ պիտի անցնէր յիշեալ դուքսն :

Այսքանը բաւական չհամարելով, յիշեալ հայրենասէր մահմէտականք գիշերը փոքրիկ շուքեաւով մի վերոյիշեալ ֆուէկաթին մօտեցան և համակրական գլխաւոր ցոյց մի ըրին եւրոպական նուագարանօք, օղածիգ փամփուշտներով (ֆիւլէնք) և ուրիշ հրախաղութեամբ և կեցցէնեւրու աղաղակներով : Էտիմպուրիկի դուքսն նոյն գիշերն արտաքին ցոյցերով իւր շնորհակալութիւնը յայտնելէ 'ի դատ, հետեւեալ օրն հաճեցաւ զնոյն կրկնել նահանգիս կուսակալին, միջոցաւ տեղւոյս Անգղիոյ հիւպատոսարանին :

—Քաղաքիս առեւտրական տոնանին նախագահ մեծաշուք Ահմէտ փեռամիլ էֆէնտին, որ քաղաքագէտ ու բանխօսն պաշտօնակալ մըն է, Մէճիտիէ կարգին երրորդ աստիճանի չքանչաւաւ պատուեցաւ :

—Մեծա. տօքթօր Մարկոսեան քաղաքակից ազգային մեր՝ որ ճարտար և գիտնական բժիշկ ու վիրաբոյժ է և 'ի Կ. Պոլիս կը գտնուէր, իւր ծառայութիւնը մատուցանելով կայսերական զօրաբանակին և սպարապետի դռնէն սիրով ընդունուելով, կը լսեմք, թէ արդէն մեկնէր 'ի Վիտին երթալու :

—Կը ծանուցանեն մեզ թէ՛ Մանիսայի վերի գեղին ազգային նորաշէն եկեղեցւոյն օծութեան հանդէսն ամսոյս 15ին կիրակի օրն պիտի կատարուի փառաւորապէս :

—Մեր նախնիքսց թուով հրատարակեցինք թէ՛ Երեթէ ամեն օր անպակաս են զինու. ըստ պառնալեօք մի քանի դէպք գողութեան և յափշտակութեան՝ որով հասարակաց ապահովութիւնը 'ի տխուր վիճակի կը գտնուի : Կը պարտաւորեմք այսօր միւսնոյն բանը կրկնել, աղաչելով զոստիկանութիւնն քաղաքիս, որ իւր ծանր ուշադրութիւնը մատուցանէ իրաց այս դժբաղդեկացութեանը վերայ և զայն բարեւթելու խնամք տանի մարդասիրաբար :

—Մեր միջնորդան սակաւ ինչ զովացաւ. սանթիկրատ ջերմաչափն 32—33 աստիճան կընշանակէ ստուերի ներքեւ :

—Ուրախ սրտիւ կը ծանուցանեմք թէ քաղաքիս Արեւիկեան ՄԱՍՈՒԼ անուն պատուական հանդէսն սկսաւ վերստին հրատարակուիլ. որոյ Յուլիսի տետրակն մեր աւագ առջև ունիմք :

—Հաճութեամբ սրտի կիմանամք թէ Համամ ճեան վսեմա. Սարգիս էֆէնտին իւր առաջին կարեւոր պաշտօնն յանձնուեր է, այսինքն արտաքին գործոց պաշտօնատան օտար թղթակցութեանց դրասենեկին ընդհանուր խորհրդոյ քարտուղար կարգուեր է :

—Պէշիքայի նաւահանգիստը գտնուող Անգղիական նաւատորմին հրամանատար Տրիմմնտ ծովապետն ամսոյս 4ին 'ի Կ. Պոլիս գնացեր է :

—Բարձրագոյն Դրան տպագրական տեսչութեան տնօրէն վսե. Պլաք—Պէշին՝ յատուկ պաշտօնիւ մի մեկնեցաւ 'ի Պուլկարիա երթալու :

—Բ. Դրան հրամանաւ, ԳՈՒՌԻԼԻ ՏՕՐԻԱՆ լրագիրը խափանեցաւ, ԹՐԱՔԻ անուն յունական թերթը մէկ ամիս դադարեցաւ, և Թուրքական ՊԱՍԻԻԹ, ՎԱԲԸԹ, և ԻՍԹԻԳՊԱԼ լրագիրներն ալ տպագրական Տեսչութեան պատուէրին հակառակ՝ իրերաց դէմ դարձեալ անձնական յարձակում ընելուն պատճառաւ, 15ական օր դադարեցան :

—Խափանեալ ԱՍԻԱ լրագրին խմբագիր Մ. Գորթուգալեան էֆէնտին՝ ասկէջ 15 օր առաջ մայրաքաղաքէն Տիփիս երթալով, Յուլիս 16 թուով հետեւեալ կը գրէ յիշեալ քաղաքէն :

«Կաթողիկոսին վրայ տարածուած լուրը բոլորովն անհիմն է : Այստեղ ամեն մարդ կը խնդայ թէ ինչ դիւրահաւան մարդեր կան եղբր Պոլիս և ինչպէս կարելի է որ նոյն իսկ լրագիրներ հաւատարմութիւն մի այդպիսի այլանդակ լուրի և էջեր զոհեն » :

—Ըստ հեռագրական լրոց Անգղիոյ Թագուհւոյն բարլամէնթին գողութեւն առիթու ուղղեալ իւր պատգամախօսութեամբ մեծ յոյս կուտայ թէ բարեպատեհ ժամանակն մօտ է, յորում իւր կառավարութիւնն արդիւնաւոր կերպիւ պիտի աշխատի, որպէսզի եւրոպական տէրութիւնքն միջամուխ լինին դադարեցնելու համար Արեւելքի մէջ տեղի ունեցած պատերազմական եղբլութիւնքը :

—Դարձեալ ըստ հեռագրական լրոց՝ Միլան իշխանն մտադիր է զՏօրեղայր իւր յուզարկել 'ի Կ. Պոլիս, որպէսզի Բարձրագոյն Դրան հետ բանակցի վասն հաշտութեան. սակայն Սերվիոյ արտաքին գործոց պաշտօնայն դէմ կը գնէ, կըսեն, և կուղէ որ պատերազմն շարունակուի :

—Կալիթայէն հասեալ վերջին թղթակցութիւն մեր հետեւեալ կերպիւ կը լսուի. Հնդկաստանի այս տարուան արտաքոյ կարգի ջերմութեան վրայօք :

«Տալ և ջերմութիւն տարւոյս այս անշափ և անօրինակ է, մանաւանդ 'ի վերինն. Հնդկաստան. կառածիգ երկվարք անկեալ 'ի փողոյն՝ սատակին և ժողովուրդն խարչատի 'ի հոսումն քրտանց. ոչ տիւ և ոչ գիշեր մնայ ումեք հանգստութիւն : Թէպէտեւ անձրեւն սովորական սկսեալ է, սակայն ոչ զովութիւն բերեալ յեղանակն. որ սակս զանազան հիւանդութիւնք բազումք են » :

—Աւստրոհունգարիոյ կայսեր տօնախմբութիւնն երէկ փառաւոր հանդիսիւ և 'ի ձայն բազմաթիւ թնդանօթաց շքեղապէս կատարեցաւ : Հինգշաբթի գիշեր՝ հետեւեալ աւուր տօնախմբութեան առթիւ զանազան հրախաղութիւնք և ճրագավառութիւնք եղեն ծովուն վերայ, ուր բազմաթիւ նաւակներ լուսաւորեալ՝ քարափանց առջև կը պարտէին հանդերձ նուագարանօք և կեցցէնեւրու աղաղակներով 'ի մեծ ուրախութիւն խուռն բազմութեան, որ ժողովուած էին 'ի ծովեղբրքն :

—Խաղական նաւատորմիդը՝ որ մեր նաւահանգիստը կը գտնուի ժամանակէ մը 'ի վեր, հրաման ընկալաւ վերադառնալու յիտալիա. հետեւաբար դալ շաբթու պիտի մեկնի :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Քամպակն՝ եւրոպայէն հասեալ յաջող լրոց պատճառաւ, բարձրացաւ, և մեքենայով մաքրուածը վաճառեցաւ 360 շուրուշի :

Աֆիօնն ևս կուգուի և գիշերն օր ըստ օրէ բարձրանալոյ վերայ են. անցեալ և այս շաբթու իւր 120 կողով տֆիօն վաճառեցաւ. 180էն—190

շուրուշի չէքին : Վերջին գինն էրէլ կողուած տեսակին համար է :

Փայլամուտէն սոյս շաբթու իւր 6000 կենդինար վաճառեցաւ 85—105 շուրուշով կենդինարն ըստ տեսակին :

Քէօքպոյան, ոչխարի բուրդն և ճէհրին անգործութեան մէջ կը գտնուին :

ԾԱՆՈԹՅՈՒՄ

Պարկեշտ երիտասարդ մի՛ որ լաւ գիտէ գաղղիարէն, անգղիարէն և յունարէն լեզուները, աշակերտներ կը խնդրէ, որոց զնոյն լեզուները ուսուցանել կ'ստանայ չափաւոր ամսականութեւնի տեղեկութիւններ ուզողը՝ պարտի դիմել առ քիր Աթմասս գրավաճառն, որոյ խանութն Յունաց առաջնորդարանին ներքեւ կը գտնուի :

ԱՌՈՂՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ

ՄԱՍՆ. Ա.

Ամուսնացեալ առն եւ կնոջ բնական եւ բժկական պատմութիւնը՝ իր խիստ հետաքրքրական մանրամասն տեղեկութեամբք :

Նոր վարդապետութիւն մարդկային ծննդեան, ամուսնի, անկարողութիւն, կազմական անկատարեւորութիւնք, զանոց բժկական միջոցք եւ պայմանք :

ՄԱՍՆ. Բ.

ՄԱՍՆԱՌՈՐ ԱՌՈՂՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Յղի կնոջ և նորածին մանկան

ի կոստանդնուպոլիս 1875

Այս օգտակար գիրքը՝ որ յուրաքանչեւ 488 էրեսայ բաղկացեալ է, գաղղիացի Ա. Տրուպի գիտնական առողջաբանին աշխատութիւնքն է. գոր յարգող պարոն Պ. Ներշապուհ գրագետը բարգմանեալ է 'ի հայերէն աշխարհի բարբառ. Կ. Պոլսոյ. ուր ամեն Հայ գրավաճառաց քով կը գտնուի եւ կը ծախուի 'ի գին մեկ արծաթ Մէճիտի :

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց կաթողիկէ և առաքելական սուրբ եկեղեցւոյն :

Այս պատուական մատենիկն՝ բաղկացեալ յառաքած 92 էրեսաց, աշխատասիրեալ է 'ի գիտնական վարդապետէ միոգէ 'ի միաբանութեան սրբոյ Եղիաթեմի 'ի պատասխանի «Արք. Ա. Պետրոսի (Ստաթապետի)» անուանեալ գրոցն, որոյ իբր 'ի հաստատութիւն գերիշխանութեան Պապին յառաջ բերած անհիմն եւ անտեղի պատճառները կը ընդգրկէ զորաւոր փաստերով եւ Ս. Աւետարանի ու Առաքելոց վկայութեամբք : Ազգային եկեղեցւոյն պաշտպան այսպիսի գրոյն մի՛ հարկ եւ արծառն է որ իւրաքանչեւ Հայոց քով գտնուի իբրեւ բարոյական գորաւոր գին մի ընդդէմ ներքին եւ արտաքին թշուառաց եկեղեցւոյ մեղքը :

Կը վաճառուի 'ի գին կես Ֆրանքի 'ի Զմիռնեան 'ի գրատունն Սրապուտոյ եւ 'ի Կ. Պոլիս՝ Ա. Ղ. եւ Եւգ. մաճեան գրավաճառաց խանութն :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթ անգամ մը՝ շաբաթ օրը կը հրատարակուի : Տարեկան գինը 120 շուրուշի է ոչ զրամով, կանխիկ վճարելի : Գուրս երթալու լրագրաց ճանապարհի ծախքը՝ առնօգին վերայ է : Ոչ որ կուգէ կրնայ բաժանորդ գրուիլ Զմիռնիս՝ Արշալոյսոյ գրատունը. իսկ ուրիշ քաղաքաց համար, ահա կընշանակել լրարոյս մեծարգոյ գործակալոյ անուանքը, որք են :

Կոստանդնուպոլիս՝ Հ. Ս. Աւաճահան էֆէնտի :

Տնօրէն և Տէր Փոսնոյ լրագրոյն :

Աղքատներու՝ աղա Միկոյիշ Հալպիւն :

Գանձի՝ Խոկնտիկ աղա Մելիքեան :

Յուպլ՝ աղա Սիմօն Ս. Մուրատեան, փոխ—

պատոս Գերմանիոյ :

Բէշերուպուրի՝ Խաչատուր ստրկաւագ Խանթարեան :

Մոսկուա՝ պարոն Զարմայր Մսերեան :

Հալպի՝ Տ. Խաչակի քահանայ Դանիէլիտեան :

Պաղատա՝ Անգղիոյ հիւպատոսի փոխանորդ, աղա Միքայէլ մահտիար Մինտեան :

Կալիթա՝ պարոն Մ. Խ. Զովակիմեան :

Մատրաս՝ պարոն Անդրէաս Սամ :

Պաղատա՝ պարոն Մանուկ Որդանանեան :

Խմբագիր—տէր լրագրոյն :

Ղ. — Կ. Պ. Պալլա—

Ի ՏԳԱՐԱՆԻ ԱՐԵԱԼՈՒԿՈՅ ԱՐԱՐԱՆԵԱՆ